Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

241
U-994

2241
2242

2010

ՀԱՅԿԱԶՆ

ՍՈՒՐԲ ԳԱՒԹԻ ՀԳՆԱՒՈՐԻՆ

ՎԱՐՈՒՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

աշխատասիրեց

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՅՈՎՍԷՓ Վ. ՖԵՐԱՀԵԱՆ

ՄԻԱԲԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ

ԿԻԼԻԿԻՈՅ

ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1883

ԳՐԻՍՏՈՍԱՍԷՐ ԸՆԹԵՐՑՈՂ.

Մեծապէս փափաքելով Հայկազն սուրբ Դաւթին բարեպաշտութիւնը մեր Ազգին մէջ մտցնելու ու տարածելու, սիրով և յօժարութեամբ յանձն առի գրել անոր վարուց պատմութիւնը, վստահ ըլլալով որ բարեպաշտ Ազգայնոց ամէն մէկը իմաստուն մեղուի պէս մտնելով այս առաքինութեանց ծաղիկներով վառեալ ծաղկոցը, կը ջանայ իր հոգւոյն ծածուկ մեղուաբունին մէջ քաղցրահամ մեղրը գործելու, նմանօղ ըլլալով Երանելւոյն առաքինի վարքին։ Այլ կը խոստովանիմ որ ընդարձակ վարուց մարդ մը չիսլիտի գտնեն, մանաւանդ թէ չատ համառօտ, ըստ որում կամ սրբոյն ծաղկած ժամանակին եղած անհոգութեանը պատճառաւ, և կամ հայրենիքէն դուրս հեռաւոր երկիր մը մեռնելուն համար, քիչ տեղեկութիւններ ձեռքերնիս

հասան անոր մեծ եռանդեանը և եղբայրսիրութեանը վրայ, և ան դիւցազնական առաքինութիւններուն, մանաւանդ սքանչելի խոնարհութեանն և ճգնութիւններուն վրայօք, որոնցմով այնչափ ընդունելի և սիրելի եղաւ Աստուծոյ, և փառաւորուեցաւ անունը աղգաց և աղանց մէջ յանեղծ յիշատակ։ Ի վերայ այսր ամենայնի անոնք որ հոգևորական կենաց քաջ տեղեակ են ու կիրթ, և առաքինութիւնը արդիւնքէն, և ոչ թէ գործոց թուէն կը չափեն, մեծարգի կը համարին կարճ տեղեկութիւն մըն ալ և քիչուոր դէպքերէն՝ թէև փոքրիկ, այլ պատուական ու կատարեալ պատմութիւն մը կը հանեն։

Ահա այդպիսի է Սրբոյն Աստուածազարդ վարուց կենդանագիրը, զոր առաջ կը բերեմ պարզ և յստակ ոճով, հաւաքելով Իտալիոյ Լուգդա քաղաքին սուրբ Միքայէլ Հրեշտակապետի Եկեղեցւոյն դիւանին մէջ պահուած մագաղաթեայ հին ձեռագրէն, զոր ուխտ երթալու ժամանակ հոն տեսեր և կարդացեր էի։ Նոյնպէս տեղ տեղ մեծիմաստ Բոլլանդեանց 'ի հատ. Ա. յունիս 3, յէջ 327 պատմածներուն հետևեցայ։ Այսանկ ալ երևելի Բարոնիոսին 'ի հատ. ԺԱ. տարեգիրներուն մէջ այս խոստովանողիս վրայօք յիշատակածը,

և Ֆրանչիսքթի Հօր Կեսարին արժանահաւատ գրուածքը մեծապէս օգնեցին այս աշխատասիրութեանս։ Ուստի կը յուսամ որ բարեսէր ընթերցողք հանդիպելով այս ճշմարիտ և ստոյգ պատմութեանը, իրենց անձանց զանազան հոգևոր բարիքներ քաղելէն 'ի զատ, կ'արծարծեն նորէն սրտերնուն մէջ այն հինաւանդ սովորութիւնը, զոր մեր նախնի հարք քրիստոնէութեան սկզբէն 'ի վեր ունէին, և միշտ հաստատուն պահեցին, այս է Երուսաղէմի և Հռովմայ ուխտատեղեաց այցելութիւնը։ Աստուած տար որ մեր Ազգայնոց մէջ աւելի եռանդեամբ նորոգուէր այս սրբազան տեղեաց յարգութիւնը, մանաւանդ 'ի Հռովմ գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պողոսի գերեզմաններուն ուխտ երթալը, որ անշուշտ միութեան կեդրոնին հետ անքակտելի կապին պայծառ ու հաստատուն նշան մըն է։

Հապա, ընդունէ յօժարութեամբ, ով Հոգեսէր, առաքինութեանց այս համառօտ նկարագիրը մշտավառ լուսի մը պէս որ փրկութեան ճամբան կը լուսաւորէ, ինչպէս կ'ըսէ սուրբ Բարսեղ Հայրապետը Գորդիոս վկային վրայ ըսած ճառին մէջ, և մի՛ խորշիր խօսքերուս սակաւ շշնկոցէն, որոնք թէ և փանաքի գրչէ մը գրուած են,

այլ վստահ եմ 'ի Տէր, որ սրբոյն աղօթ-
քովն և բարեխօսութեամբն՝ անշուշտ Քրիս-
զի օգտակար պիտոր ըլլան և ազգին պատ-
շաճ յարգը ու պաշտօնը մատուցանելու-
քու Հայրենակցիդ, թող թէ առանձին ևս
յիշատակը կարգելու Եկեղեցւոյդ մէջ 'ի
փառս Աստուծոյ և 'ի պատիւ մեր սքանչե-
լագործ Սրբոյն։

ԳԼՈՒԽ Ա.

*Դաւթին մատաղ հասակին արիական առաքի-
նութիւնը ու առացուածքին հրաժարիլը։*

Դաւթին ծննդեան տեղը մեծ Հայաստանն
է, և շատ հաւանական է որ ծնունդը Քրիստո-
սի թուականին հազարերորդ տարին հանդի-
պած ըլլայ, սուրբ Գրիգոր Նարեկացւոյն կեն-
դանութեան ատենը, բայց թէ Հայաստանին
որ քաղաքը, և ինչ անուն ունեցած են անոր
երջանիկ ծնողքը, բոլորովին մեզի անծանօթ է։
Սակայն ստոյգ է որ ազնուական և հարուստ
ցեղէ մը առաջ եկած է, ինչպէս դէպքերը կ'ե-
րաշխաւորեն մեզի։ Բայց ինքն երբէք մեծու-
թիւն չէր ծաներ, պատրող միութարութենէն
և աշխարքին ուռած հոգիէն չէր ընկճուած։
Այլ Աստուծոյ ընտրեալը մանկութեան հասա-
կէն 'ի վեր կենսաբեր Աւետարանին դպրոցը
լաւ վարժած էր սիրտը չի կապելու անցաւոր
հարստութիւններուն, այլ վեր վերցնելու դէպ

'ի այն դանձերը, զորոնք ոչ ցեցը և ոչ ժանգը մաշել կրնան։ Եւ շատ աղէկ հասկցած էր թէ ի՞նչ է աշխարքը, և ի՞նչպէս կը վարուի իր կայր հետևողներուն հետ, և ի՞նչ դրամով կը վարձատրէ անոնց աշխատանքը։ Լաւ ըմբռնած էր թէ աշխարքը իրեն համար չէր, ինքն ալ անոր համար չէր, և թէ 'ի զուր ետևէ կ'իյնար հոգւոյն խաղաղութիւնը ուրիշ տեղ մը փնտռելու, որն որ չի գտնուիր՝ եթէ ոչ յԱստուած։ Ասոր համար ան փափուկ հասակին մէջ ինքզինքն բոլորովին Աստուծոյ նուիրեց, որուն հաւատարմութեամբ ծառայելովն՝ աւելի ապահով էր չի կորսնցնելու ոչ իր կենաց տարիքները և ոչ քրիստոնեական աշխատանքին արդիւնքը։ Եւ այս հաճոյական զոհովն ուրիշ վախճան չէր դիտէր, բայց եթէ հոգւոյն փրկութիւնը, որուն ուրիշ մնացած բաները միայն հարկաւոր և օգտակար կը սեպէր, երբ այս աստուածպաշտութեանը շահաւոր ըլլային, ապա թէ ոչ իբրև անօգուտ և վնասակար կը մերժէր։ Իրաւցնէ ի՞նչ օգուտ է աշխարքին ամէն զուարճութիւնները վայելել, ու հոգին կորսնցնել։ Այդպէս ի՞նչ շահ կը տեսնայ նաւավար մը, նաւը ծանրագին և օտար վաճառներով բեռցնելէն, թէ որ նաւահանգիստը չի հասած՝ ընկղմի և կորսնցնէ բոլոր ինչքը։ Ի՞նչ օգուտ կը տեսնէ ևս ճամբորդ մը, եթէ հայրենիքը ողջ և առողջ չի դառնայ, թէև ճամբորդութեան ատենը գեղեցիկ տեսարաններով զուարճացած ըլլայ։ Կամ ի՞նչ բարիք կը քաղէ զինուոր մը պատիւներու և պաշտօններու հանելէն, եթէ կռուին սաստ-

կութեան ատենը՝ մահուան զոհ իյնայ։ Արդ այս ծովածուփ աշխարքին մէջ մենք նաւորդի մը պէս ենք, միայն երկինքն մեր դիտած նաւահանգիստը ըլլալու է, ասիկայ է մեր բուն հայրենիքը, որուն հասնելու ջանանք պիտի այս պանդխտութեան ատեննիս, այն է միայն մեր սիրտ ու զօրաւոր բերդը, որուն ապաւինած՝ մենք մեզի պահպանենք պիտի թշնամեաց յարձակումներէն քաջ պատերազմողի մը պէս։ Այս ուրեմն ի՞նչ օգուտ կ'ըլլայ մեզի չի հասնիլնէ այս ապահով նաւահանգստին, այս ցանկալի հայրենիքին, այս երկնաւոր քաղաքին. «զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի»[1]։ Հաւասիկ ասոնք են սուրբ Աւետարանին աստուածեղէն խմաստութեան նշանաւոր պատուէրները, զորս Դաւիթ միտքը որոճալով՝ հասակին աճելուն հետ կը մնացանէր իր սրտին մէջ, և օրէ օր կը բորբոքէր, անանկ որ օր մը, ինչպէս սովորութիւն ունէր, եկեղեցին մտնելով, և սուրբ Աւետարանին խօսքը լսելով «եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ վաճառեա զինչս քո՝ և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս և եկ զկնի իմ»[2]։ Աստծապէս սիրտը կը շարժի և անկից վերջը անձնուրացութենէն և Քրիստոսի համար աղքատութենէն աւելի սիրելի և պատուական բան մը չէր համարեր։ Ո՛վ սքանչելի աստուածային խօսքին ազդեցութեանն որ երկ-

1 Մատթ գլ. ԺԶ. 26։
2 Մատթ գլ. ԺԹ. 21։

տայրի սրէն աւելի կտրող է, և կը թափանցէ իր ճառագայթը ներս հոգւոյն ամենածածուկ տեղը, և հոն կը ցուցնէ իր անպարտելի զօրութիւնը:

Սակայն այդպիսի աղքատութիւն մը 'ի գործ դնելու համար Դաւիթ նախատես կ'ըլլար, որ ամէն կողմէն դիմացը զօրաւոր արգելքներ ելլէին պիտի. մանաւանդ թէ աշխարքին իմաստունները յիմարի անուն տալով իրեն՝ ղինքը ծաղրէին պիտի: Բայց ողորմածն Աստուած Դաւիթին աղնիւ սիրտը զարդարած էր կատարեալ սիրոյն շողացող կայծերովը, որով զօրացած տունը դարձածին պէս՝ բոլոր ինչքը կը ծախէ, և համաձայն Աստուածային պատգամին գինեներին աղքատներուն կը բաժնէ: Կարծես թէ ալ իրմէ անտանելի և ծանր բեռ մը թօթուած ըլլայ, և իբր երկաթի շղթաներէն ազատուած՝ աւելի մեծագոյն իրաց միտք դնելու հրաւիրուած կը սեպէր ինքզինքը: Ամէն մէկը կրնայ դիւրաւ ինքիրմէ մտածել՝ թէ ինչ բարձրագոյն կատարելութեան գործ էր ըրածը, մէկ վայրկեանի մէջ ունևոր և բարեկեցիկ ըլլալէն՝ յետին աղքատութեան դառնալ, հետևելով այս կերպով Քրիստոսի առաքինութեանը, որ այս աշխարքը խոնարհ, արհամարհ և աղքատին կեանք վարեց: Բայց Դաւիթ բաւական չըսեպելով հարստութիւնը աղքատներուն բաժնելը, և աշխարքին ամէն փառքէն և շքեղութենէն հրաժարիլը, ուզեց ևս 'ի գործ դնել Քրիս-

1 Մատթ. գլ. ԺԹ. 24:

տոսին միւս պատգամը, «եթէ որ կամիցի զկնի իմ գալ՝ ուրացցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ»[1]: Եւ գործքով ցուցուց, առաջ նետուելով նեղութիւններուն՝ ամենայն սիրով շալկեց իր խաչը, չ'ուզելով պարծիլ՝ բայց եթէ 'ի խաչն տեառն Յիսուսի, որուն համար աշխարքը մեռած էր և խաչուած, և ինքն մեռած և խաչուած աշխարքին: Այսր համար զարմանալու չէ, թէ այսպիսի հաստատուն մտքով սկսած ըլլայ Յիսուսի Քրիստոսի օրինակին հետևելու, որով մեծ վստահութեամբ կատարելագոյն առաքինութեան դժար ճամբան մտաւ: Իրօք որ ծննդեան տեղը, աղգականները ու հայրենիքը քաղցր ու զօրաւոր կապերով իրենց կը կապեն կը քաշեն մարդը: Բայց Դաւիթ սրբութեան այն բարձր աստիճանին հասած էր, որ ասոնցմէ ևս բաժնուեցաւ, և ասանկ հրաժարելով բոլոր անցաւոր բարիքներէն՝ նախամեծար ընտրեց ինքզինքն ընծայելու այն քաղցր սիրոյն, որ արդարոց մէկհատիկ մխիթարանք է:

ԳԼՈՒԽ Բ.

Երուսաղէմ և Հռոմի ուխտ երթալը:

Այսքէն սրբազան տեղւոյ մը այցելութիւնը հին ժամանակներէն 'ի վեր ամենուն քով սաստուած պաշտութեան առանձին նշան մը սեպուած է: Արդէն Մովսէս մարգարէին ատե-

1 Մատթ. գլ. ԺԶ. 24:

նէն աստուածային հրաման մը կը նշմարի Իսրայէլի ժողովրդեան տրուած՝ որով ամէն մէկը տարին երեք անգամ կը պարտաւորէր ուխտ երթալու այս է «'ի տանի բաղարջակերաց, և 'ի տանի եօթներորդաց և 'ի տանի տաղաւարահարաց»[1]: Յիսուս Քրիստոս իսկ այս պատուէրը 'ի գործ դնելու չի դանդաղեցաւ ինչպէս սուրբ Աւետարանչէն յայտնի է «և երթային ծնողք նորա ամի ամի 'ի տանի զատկին»:[2] Նոյնպէս վարդապետաց հաստարակ կարծեացն համեմատ սուրբ Աստուածածինն Քրիստոսի համբարձմանէն ետքը՝ այցելութեան կ'ելլէր, երբեմն Բեթղեհէմ, ուր որ իր որդին ծնաւ, երբեմն Գողգոթա՝ ուր խաչուեցաւ, և շատ անգամ իբրև սուրբ ուխտաւոր մը անմահ գերեզմանին առջևը կը կենար: Մեր Խորենացին ևս այս կարծիքէն չի հեռանար, երբոր կը յիշէ 'ի Թուղթն առ Սահակ Արծրունին, 289. թէ «ոչ տային (տիրամօրն) գնալ 'ի գերեզմանն կալ յաղօթս, կամ 'ի Գեթսեմանի յայտնապէս... բայց միայն գաղտնի»: Ասանկ ալ քրիստոնէութեան ծաղկած ժամանակէն 'ի վեր կը տեսնանք այս բարի սովորութիւնը: Հեղինէ Աբգար թագաւորին կինը ըստ Խորենացւոյն (գիրք Բ. 113) մեծ հաւատքով զարդարուած՝ Երուսաղէմ գնաց յուխտ և հոն բնակեցաւ: Եւսեբի Եկեղեցական պատմութեան մէջ[3], Գամրայ

1 Երկրորդ օրէնք, գլ. ԺԶ:
2 Ղուկաս. գլ. Բ. 4:
3 Դպ. Զ. գլ. ԺԱ:

Ալեքսանդր եպիսկոպոսին համար, որ մեծն Կոստանդիանոսէն դար մը յառաջ էր, կը պատմէ թէ «գայր յԵրուսաղէմ յայցելութիւն տեղեացն և յաղօթս»: Ալեքսիանոսի վարքին մէջ ևս կը կարդանք թէ Երուսաղէմ երթալ կը փափաքէր, մարմնաւոր աչքովն Քրիստոսի տնօրէնութեան տեղերը տեսնելու. այլ վախցաւ, չ'ըլլայ թէ Հռովմայեցի ուխտաւորները զինքն ճանչնան, անոր համար Եգեսիա գնաց Քրիստոսի սուրբ դաստառակին այցելութեանը[1]: Բայց մեր Լուսաւորիչը մեզի պայծառ օրինակ մը թողուց իր այցելութիւնը՝ զոր կատարեց 'ի Հռովմ, ինչպէս յայտնի է Ագանդուղեանէն: Նոյնպէս սուրբ Բարսեղ հայրապետն «չրջեցաւ 'ի սուրբ տեղիս[2]»: Նոյն սուրբը Գորգիսս վկային ճաւին մէջ կը յորդորէ հաւատացեալները ուխտատեղեաց այցելութեանը. «հոն չըակելու ենք, կ'ըսէ, մեր ոտքը, ուր խաղաղ կը հանգչին այն քաջերը, որ մահուան յաղթելով մեծամեծ արիութեան օրինակներ մեզի թողուցին. խնդագին բանանք մեր լեզուն տօնական երգերով և ծաղկէ պսակներով պսակենք յաղթօղաց գերեզմանները»: Ասանկ ալ Յովհան Ոսկեբերանը հառաչելով կը գոչէր. Ո՛հ թէ որ ցաւերս կամ հոգերս և հովուական պաշտօնս չ'արգելուին նէ, շուտով կը թռչէի կ'երթայի 'ի Հռովմ «զեղուլ զմարմնովն Պաւղոսի և բեւեռել ընդ գերեզմանին... ընդ

1 Տես 'ի վարս սրբոց հատ. Թ. 59:
2 Տես 'ի վարս սրբոց հատ. ժ. 351:

սորայս և Պետրոսին» [1]։ Պետրոսին դամբանին առջևը, կ'ըսէ ևս սուրբն Օգոստինոս, ծունկ չոքած կը տեսնուին գլուխնին խոնարհած կայսերները, յարգելով ցուրտ մարմարիոնը, մինչդեռ Հռովմայ կայսերաց գերեզմանները մթով պատած կը կենան, և առ հնութեան քայքայելու վրայ են։ Ո՞վ կրնայ ևս բացատրել մեծին Հերոնիմոսի Բեթղէհէմ պանդխտելուն սաստիկ բաղձանքը, անանկ որ ոչ Հռովմայ փափկութիւնները, ոչ փառաւոր պաշտօնները և ոչ բարեկամաց թափած արցունքները կրցան զինքն ետ կեցնել մարին ու այրին այցելութեան երթալէն, որք արդէն Քրիստոսի մանկան հրաշմամբն հնչած էին։ Նոյն եռանդը ևս ով չի տեսնար մեր թարգմանչաց վրայ, ի՞նչ հաւատքով չի վազեցին Խորենացին և իր ընկերները 'ի Հռովմ սրբոյն Պետրոսի և Պօղոսի «հանգիստը յարգանաց ողջունելու» [2]։

Արդ այս յիշեալ տրերէն վար չմնայ մեր Դաւթին Աստուածպաշտութիւնը, որով աշխարհին որ և իցէ զբաղմունքներէն հրաժարելով դէպ 'ի Երուսաղէմ ճամբայ կ'ելլէ. Յիսուսի Քրիստոսի տնօրինական տեղեաց յարգութիւնը մատուցանելու։ Այս ճամբորդութեան ատենը բնաւ ոչքէն և ոչ վայրկեան մը կը հեռացնէր Աստուծոյ ներկայութիւնը, և ըստ այնմ իր բոլոր գործքերը կ'ուղղէր։ Կերակուրը քիչ ու աղքատին էր. աշխատանքը անպակաս, նեղուա-

1 Մեկն թղ. Պող. առ Հռովմ. ճառ. ԼԲ. 449-422։
2 Խոր. գիրք Բ. 262։

թեանց և վշտաց դիմացող, կարիճ և հաստատ որ և իցէ դժուարութեանց մէջ, ճամբանելուն երկարութենէն ալ ոչ երբէք յոգնող։ Այդպիսի առաքինութիւններով զարդարուած կը հասնի Երուսաղէմ, ուր մեծ եռանդեամբ և սիրով այցելութիւնը կը սկսի։ Հոստեղ մեղի խօսքեր կը պակսին այս առաքինի ուխտաւորին ջերմեռանդութիւնը նկարագրելու։ Սեպէ՛ թէ աչքիդ առջևն ըլլայ, տես ի՞նչպէս ինքզինքն ժողված՝ մեր փրկութեան բարձր խորհրդոց մտածութեանց մէջ կ'ընկղմէր, ծունկ չոքած՝ առանց ձայն մը հանելու աղօթքի զբաղած, սրպիսի յարգութեամբ չէր համբուրէր այն սուրբ մուրը՝ ուր որ Քրիստոս պառկած էր, այն տխրալկան տեղը՝ ուր 'ի խաչ ելած էր, այն անմահ կենսատու գերեզմանը՝ ուր սուրբ մարմինը թաղուած էր։ Անշուշտ հոս Դաւիթ վեր վերցնելով միտքը, ետևէ կ'ելլար փնտռելու իր ծայրագոյն բարին, հոս աւելի մօտ իրեն կը տեսնէր, հոս 'ի մշանջենաւորս իրեն հաւատարիմ մնալու կ'ուխտէր, և հոս միաւորած կը կապուէր անհուն սիրոյն հետ։

Բայց այս սաստիկ եռանդը օրէ օր սրտին մէջ սաստելով բաւական չէր երևցնէր իրեն Աստուծոյ սիրոյն համար ըրած բարեգործութիւնները և քաջած վիշտերը։ Աւելի ալ առաքինութեանց ձեռք զարնելու և աւելի արդիւնք վաստակելու փոյթ կը տանէր. անոր համար դիտեց Երուսաղեմէն Հռովմ երթալու այն հռչակաւոր քաղաքին սուրբ տեղերը մեծարելու համար, մանաւանդ սրբոց Պետրոսի և Պօղոսի Առա-

քելոյն շնորհաբաշխ գերեզմանները։ Դարձեալ այս երկայն և աշխատալի ճամբորդութեան ատեն՝ իր համբերութիւնը կրկնապատկեց. աղքատութիւնը իրեն ընկերակից ըլլալ, ինչպէս որ Հռովմ հասնելով երբեմն այս՝ և երբեմն այն ուխտատեղին կ'երթար, ուր որ և իսկ գետնի կպած խորհրդոց մուտքը գոյելով սրբոց այլ և այլ առաքինութիւնները մտածելու կը դրաղէր, և ասոնց սիրովն իր սիրոյն բոցը բորբոքելու միտք կը դնէր։ Բայց սակայն ամէն մէկը կրնայ ենթադրել թէ այդպիսի հոգևոր և սուրբ անձ մը, ինչպիսի յօժարութեամբ չէր դիմած ևս կատարելու իր մեծարանաց և հպատակութեան պարտքը՝ զոր ունէր Եկեղեցւոյ գլխուն։ Ո՞րպիսի եռանդեամբ չէր խնդրած անձամբ ան տեղն եղող Սրբազան Քահանայապետին Ս. Առաքելական օրհնութիւնը, և ինչ յարգութեամբ չէր ընդունած։

ԳԼՈՒԽ Գ.

Դաւթին Լուգգա քաղաքը երթալը և մահը։

Հռովմայ այցելութիւնը կատարելէն վերջը բնական էր որ Դաւիթ ալ հանգիստ տար յոգնած մարմնոյն։ Սակայն բանի տեղ չի սեպելով այնչափ քաշած նեղութիւնները, միտքը դրաւ Սպանիա յուխտ երթալու, Քոմիսոթելլա Զ. ըսուած քաղքին մէջ սուրբ Յակոբ Առաքելոյն մասունքները յարգելու համար։ Ուստի չի դանդաղելով 'ի գործ դնելու այս փափաք՝ ցամաքէն ճամբայ կ'ելլէ, և Թոսքանա հողը հասնելով Լուգգա քաղաքը կը հանդիպի, ուր ներկայ զինքն քաշած տարած էր սուրբ դաստառակի անուամբ հոն տեղի յարգուած հրաշագործ պատկերին համբաւը։

Բայց հոս ուժը անանկ տկարացած կը նշմարէր, որ այլ ճամբան առաջ տանելու կարողութիւնը չէր մնացած։ Յիշեալ Լուգգա քաղաքը հասած տարին 1850ին, մայիսին սկիզբը հանդիպեցաւ, այս ժամանակը ինչպէս կը ծանուցանէ Ֆրանչիսթի հեղինակը, սուրբ Միքայէլ հրեշտակապետին եկեղեցւոյն հրապարակին մօտ երկու հիւանդանոցներ կային, մէկը ուխտաւորաց՝ մէկալը հիւանդաց համար։ Դաւիթ առաջնոյն մէջ հիւր ընդունուելով ուրիշներուն շնորհած կարճ ժամանակին չափ հոն կը կենայ, և աս տեղէն յետոյ Ս.թա անուամբ աղնուական և Աստուածասէր տիկնոջ քով կ'ելլէնայ, որ մօտ ըլլալով անոր տունը այն հիւանդանոցին՝ անձամբ ականատես եղած էր Դաւթին առանձնական շնորհաց ու ձիրքերուն և անուշահոտ վարքին, որոնցմէ անշուշտ շարժեալ՝ իր քովը հրաւիրած էր և առանձին սենեակ մը ալ տուած էր։ Ս.անկ մեր ճգնաւորը հոն քաշուելով թէև կը ջանար խոնարհութեան համար ծածուկ պահելու Աստուծմէ իրեն շնորհուած անգին դանձերը, այսու ամենայնիւ վեհ առաքինութիւն մը, հրաշագեղ սրբութիւն մը և կատարելութիւն մը ամէն գործքերուն մէջ փայլելով տեսնողներուն աւելի յայտնի կ'ընէին

իր հոգւոյն գեղեցկութիւնը։ Այդպէս անդադար էր մտածականը, անպակաս աղօթքը՝ որով հոգին կը պարարէր, համեստ ու չինող էր խոստակցութիւնը ու կենցաղավարութիւնը՝ որով այլոց սիրտը կը վառէր Աստուծոյ սիրովը, ծոմը և պաքը որով մարմինը կը ճնշէր՝ յաճախ էին, անանկ որ շաբաթը երեք անգամ միայն կերակուր կ'առնուր, և այն չոր ցամաք հաց և պարզ ջուր։ Ուստի աղնիւ տիկինը սրբոյն այս կերպ աքանչելի վարուց վրայ զմայլած՝ անբաւ շնորհակալութիւններ Աստուծոյ կը մատուցանէր այս սուրբ ուխտաւորը իրեն ցուցնելուն համար։

Բայց երկար չի տևեց աղնիւ տիկնոջն այս ուրախութիւնը ու մխիթարութիւնը, վասն զի տեսնը ընդունելէն քանի մը օր վերջը՝ տեսաւ որ Դաւիթ ծանր հիւանդութենէ մը բռնուած էր, որով մէկ կողմէն սաստիկ կը վշտանար և կը տագնապէր վախէն դինքն կորսնցնելու, մէկալ դիէն աւելի կը շինուէր ասոր համակամութեանը և համբերութեանը վրայ՝ որով զուարթ երեսով հիւանդութեան ցաւերը և նեղութիւնները կը կրէր։ Այսու ամենայնիւ այս մարդասիրաբար հիւրընկալ տիկնոջ իր սիրելի հիւրը յաառողջութիւն դարձնելուն մեծ էր հոգը ու խնամքը։ բայց Դաւթին հիւանդութիւնը երթալով կ'երթար ու կը ծանրանար, որով ստիպուրեց վերջին սուրբ խորհուրդները ջերմ եռանդով ընդունելու, և գիտնալով մահուան մօտիկնալը՝ քովը կանչեց աստուածասէր տիկինը և շատ օրհնութիւններով շնորհակալ եղաւ անոր ցուցած հիւ-

բասիրութեանը և խնամքին, և երեք օր առաջ իրեն գուշակեց մահուան օրը և ժամը։ Անանկ առողջութեան յոյսը օրէ օր նուազելով Դաւթի սրտին մէջ այս շատ անցնող կենաց սիրոյն տեղ՝ աւելի վեմ և անվերջանալի սէր մը կը բարբրքուէր, և մահուան մահին՝ բնաւ ձեռքէն չթողուց իր ամէն գործքերուն վրայ արթուն հսկողութիւնը։ Վերջապէս ուչքները դէպ 'ի սիրելի խաչեալը դարձուցած կ'աւանդէ մաքրափայլ հոգին իր արարչին ձեռքը այնչափ արդիւնքներով լեցուն։ Այս երջանիկ մահը Քրիստոսի Թուականին 1050ին, յունիսի 3ին հանդիպեցաւ, և ոչ բոպէ մը շեղելով Աթամտիկնոջ կանխաւ յայտնած մարգարէութենէն։ Բարոնիոս ևս այս տարի կը դնէ սրբոյն երջանիկ մահը, տես 'ի տարեգիրս Եկեղեցւոյ [1]։

Սաստկապէս արցունք կը թափէր փսփկաւուն տիկինը, Աստուծոյ ծառան շուտով կորսնցընելուն։ Արդեամբ երեք շաբաթէն աւելի չի տևեց, ինչպէս կը կարծուի, ասոր քովը Դաւթին բնակութիւնը։ Յովսէփ Զիվիթալի [2] կը պատմէ, թէ Դաւիթը տունը ընդունուելէն քանի մը օր ետքը, Աստուածմէ յայտնութիւն մը եղած էր այս տիկնոջ, իբր զի մարդասիրութեամբ քովը ընդունելուն համար այս ճգնաւորն անձը, վարձ ընդունէր պիտի թէ ասս և թէ անդիս աշխարքը։ Ուստի զարմանալու չէ,

1 Հա. ԺԷ. թիւ 57։
2 Յովսէփ Զիվիթալի 'ի պատմութեան Լուգդա քաղաքին յամին 1050։

եթէ իրեն շատ կարճ երևցած ըլլայ Դաւթին իր քովը կենալուն ժամանակը, և թէ սոր մահուանէն վերջը մեծ բարեպաշտութեամբ և առատաձեռնութեամբ վրան առած ըլլայ թաղման հանդէսը, զոր կատարել տուաւ մեծ շքով ու փառաւորութեամբ սուրբ Միքայէլ հրեշտակապետին եկեղեցւոյն քահանաներուն, և թաղել տուաւ պատուական մարմինը եկեղեցւոյն մօտ հասարակաց գերեզմանատունը:

Արդ գիտնալու է որ այս եկեղեցին յարգի է հնութեանը համար, վասն զի ըստ վաղեմի յիշատակարանաց Քրիստոսի Թուականին 764 ին շինուած էր: Բայց հիմակուան տեսնուած ձևին մէջ մտաւ 1142 էն, որուն շինութեանը Բոլսոնդեանց վկայութեանը համեմատ, ան ժամանակէն քրիստոսասէր հաւատացելոց առ սուրբն Դաւիթ առանձինն ցուցուցած բարեպաշտութիւնը շատ նպաստեց. առատապէս անոնց տուած նուէրներովն և ողորմութիւններովն: Նոյնպէս գիտնալու է որ այն ժամանակները սովորութիւն կար մեռեալները ոչ ներս սուրբ տաճարներուն մէջ, այլ դուրս քովի գերեզմանները թաղելու: Սոր համար սրբոյն պատուական մարմինը սուրբ Միքայէլ եկեղեցւոյն այն կողմը թաղուեցաւ, որ սրբուհի Լուսիա ժամուն դիմացը կ'իյնար, ուր երկար ատեն բարեպաշտ ընկերութիւն մը հաստատուած էր, որ յիշեալ վկայուհւոյն անուամբն հոգևոր գործոց համար հոն կը ժողվուէր: Եւ որովհետև այս երկու եկեղեցեաց մէջ տեղը միայն հրապարակը կ'իյնար, անոր համար շատ նպաստեց որ աւե-

լի յայտնի երևնան ամէնուն Դաւթին սրբութեան նշանաւոր հրաշքները, ինչպէս յաջորդ գլուխ պիտի տեսնենք:

ԳԼՈՒԽ Դ.

Դաւթին զանազան հրաշքները:

Սրբոյն մարմինը թաղելէն շատ ատեն չ'անցած՝ կին մը որ երկար ժամանակէ տեսատեսութեան պատէն կը տանջուէր, շատ անգամ առանց յարգութեան Դաւթին գերեզմանին վրայ ժուռ կուգար: Օր մը այս կինը հոն դտնուած ատենը, սաստիկ տարութիւն մը զգալով՝ սրբոյն գերեզմանին վրայ նստաւ, և խոր քնէն բռնուեցաւ: Այս միջոցին 'ի տեսլեան սուրբը կ'երևնայ իրեն, և զինքն յանդիմանելով կ'ըսէ, թէ հոն հողին տակը թաղուած ըլլալով իր մարմինը, ուրիշ անգամ մտադիր կենար պատշաճ յարգանքը մատուցանելու այնպիսի տեղւոյն, և այլ հոգ չ'ընէ՝ արթընցածին պէս ողջ և առողջ պիտի ելլէր: Այս խօսքերէն կինը կ'արթընայ, ոհ զարմանալի բան, արեան հոսանքը կը դադրի, վերքը կը գոցուի, և բոլորովին ողջընցած ինքզինքն կը տեսնայ: Այս մեծ շնորհին վրայ ուրախանալով ամէնուն այս սրբոյն միջնորդութեամբը իրեն պատահած հրաշքը հազար շնորհակալութեամբ կը պատմէր: Ապա եկեղեցին երթալով ուխտեց ոչ միայն սրբոյն գերեզմանը յարգութեամբ մեծարելու, այլ

ցորչափ կենդանի էր, կարօղութեանը չափ ընդունած երախտեացն փոխարէն ընծայ մը նուիրելու։ Բարեպաշտ կինը 'ի գործ դրաւ այս ըրած ուխտը, վասն չի մնալով Աւետարանին մէջ բերած տեղատես կնկան օրինակէն։

Գրեթէ նոյն միջոցը սրբոյն գերեզմանին վրայ տերևաղարթ որթ մը ծլած տեսնուեցաւ, որ մեծնալով ամէնուն զարմանք պատճառեց, թէ տարածած ընդարձակ ճիւղերուն համար, և թէ հասուն խաղողին։ Եւ աւելի զարմանքը աւելցուց, երբ շատ հեղ փորձիւ ալ ստուգուեցաւ, որ հիւանդները այն հրաշալոյս որթոյն պտղէն ճաշակելու ատենին՝ նորէն առողջութիւններն կ'ըստանային։

Աւորմէ 'ի զատ դիտուեցաւ որ գիշեր ատեն գերեզմանին վրայ յաճախ ճրագներ կը վառուէին, և անուշ խնկոց հոտեր կը բուրէին, քաղցրաձայն երգոց նուագներ ալ կը լսուէին, ոչ թէ արուեստով կամ մարդկեղէն ճարտարութեամբ մը, այլ յայտնապէս մարդկանց կարօղութենէն վեր զօրութեամբ մը։ Արդ այս ամէնը կը պատահէր, որպէս զի Աստուծոյ Դաւթին ոսկերքը « Ցնծացեն 'ի հանգիստս իւրեանց », ինչպէս կ'ըսէ սաղմոսերգուն սրբոց համար, այս ինքն է անունը և համբաւը անանկ հռչակուին որ քանի անգամ եռեէ եկօղները անոր սուրբ գերեզմանին աչքերնին դարձնեն, յիշեն և անոր աննման առաքինութիւնները, և յարգութեամբ կատարեն փառաւոր յիշատակը։ Արդեամբ իսկ այս աստուածեղէն գթութեան խորհուրդը պտղաբեր եղաւ, վասն զի

քրիստոսասէր հաւատացեալները լսելով և տեսնելով սոր՝ մեծամեծ հրաշքները, սկսան բազմութեամբ յաճախել գերեզմանը, և մեծահանդէս շքով մեծարել։

Շատ ալ չքաշեց, Լուգդա քաղաքին Յովհաննէս Եպիսկոպոսը ամէնէն յառաջ այս յիշուած հրաշքները քննութեան տակ առնելով՝ հաստատեց բոլորը, ինչպէս կ'ըստուգէ մեզի հայրն Կեսար Ֆրանչիոթթի մատենագիրը։ Այս եպիսկոպոսը Լուգդա քաղաքին եպիսկոպոսութեան աթոռը նստած էր 'ի 1026 թուականէն մինչև 1058։ Նոյնպէս սոր յաջորդը Մեղիոլան քաղաքէն Անսելմոս Պատասիս, որ թէ և յետոյ յամին 1061 Եկեղեցւոյ քահանայապետութեան գահը ելաւ Աղեքսանդր Բ անուամբ, բայց միանգամայն պահեց Լուգդա քաղաքին եպիսկոպոսութեան տիտղոսը, հանգիստած հրաշքները հաստատելով՝ հրամայեց որ Դաւթին սուրբ մարմինը թաղուած տեղէն յարգութեամբ աւելի պատշաճ տեղ մը փոխադրուի, և ուրիշ մեռելոց գերեզմանէն զատուի, թէ անոր յիշատակը աւելի փառաւորելու, և թէ հաւատացելոց ջերմեռանդութիւնը լեցնելու համար, զոր նոյն ինքն Աստուած ասանկ սքանչելի կերպով բորբոքած էր անոնց սիրտը իւր հաւատարիմ ծառային փառքին համար։ Շուտով Անսելմոսին հրամանը 'ի գործ դրուեցաւ, և սուրբ մարմինը հասարակաց գերեզմաններէն հանուեցաւ և փոխադրուեցաւ ներսը սուրբ Միքայէլ հրեշտակապետի եկեղեցին, և ամփոփելով թրծած կաւեղէն տապանի մը մէջ սուրբ Դա-

կասու խորանին քովը դրուեցաւ, որ հիմայ Աստուածահօր սուրբ Յովսեփայ խորանն է։

Այս հրաշալարդ ոսկերաց փոխադրութիւնը աւելցուց հաւատացելոց սրտին մէջ աւելի եռանդ և յարգ դէպ 'ի սուրբն, որով անոր միջնորդութեամբը կաղեր, կուրեր, անդամալոյծք և պէսպէս ցաւերէն բռնուածներ առողջութիւններն կը գտնէին։ Այսանկ այն բարեպաշտ կինը՝ որն որ ինչպէս պատմեցինք, տունը ընդունած էր Դաւիթը, աղախին մը ունէր, զոր չար հոգին անանկ սաստիկ կը տանջէր, որ տեսնողները կը սոսկային և միանգամայն վրան կը խղճային։ Այսոնք աշխատեցան ներս եկեղեցին մղցնելու այս դիւահարը, և սուրբ Դաւթին տապանին առջևը կացնեցնելու, բայց այս միջոցը աւելի դէշնալ սկսաւ մղեգնեալը, և կ'աշխատէր կապանքէն ինքզինքն ազատելու, խածուածներով մարմինը կը պատռտէր, և կատաղի պոռոցներ կը հանէր. վերջապէս յուսահատ դեռինը կը փռուի դեղնած, տգեղ և ինքզինքն կորանցուցած։ Այս միջոցին իրեն երևցաւ Դաւիթը տեսլեամբ, որ մխիթարելով զինքն կը քաջալերէր, Քրիստոսի հաւատքին մէջ հաստատուն կենալու, և մի վախնար, կ'ըսէր, դեռեզմանիս քովը աւելի մօտեցիր, ու անուամբ Տեառն ցաւերդ կ'ազատուիս։ Արթնցաւ աղախինը, և չորս կողմը կնցող քահանայից տեսիլքը պատմեց։ Այսանք չ'ուշացան մտեցնելու գերեզմանին դիւահարը, և ահա յանկարծ ազատուեցաւ տանջող հոգիէն, և հէր և հպատակ կը կենար, որպէս թէ բան մը կրած չ'ըլլար։

Այս դէպքէն քիչ մը վերջը, ազնուատոհմ մէկ մը տեսնելով որ իր սիրելի որդին ծանր հիւանդութենէն պառկած մեռնելու մօտ էր, շատ կը տրամէր։ Զանց չէր ըրած գործածելու մարդկային միջոցները տղուն առողջութեանը համար, բայց օգուտ մը չ'բաղելէն 'ի զատ, օրէ օր կը գէշնար տղան։ Վերջապէս Աստուծոյ օգնութեանը ապաւինելով 'ի պատիւ Դաւթին ուխտ մը ուխտեց որդւոյն առողջութեանը համար, և Դաւթին կենդանութեանը ատեն գրածած ջրէն քիչ մը տղուն խմցնելով, մէկէն ողջնցած կը տեսնայ և հանգիստ իր զաւակը։

Գրեթէ նոյն ժամանակը պանդուխտ մը խուլ և համր, սուրբ Միքայէլի եկեղեցին մանելով ողորմութիւն խնդրելու համար, տեսաւ որ հաւատացեալներէն ոմանք սրբոյն տապանին չորս կողմը ճրագներ կը վառէին, և ոմանք ծունկ չոքած ջերմեռանդութեամբ կ'աղօթէին։ Այսկէ մտքովը հետևցուց թէ սրբոյն բարերար և կարող մէկ մըն էր այն՝ որուն այնչափ մարդիկ խոնարհութեամբ և մեծարանօք կը դիմէին։ Այսոր համար ինքն ալ անոնց նման գետինը չոքած իր դիտումը անոնց դիտմանը հետ միաւորելով սկսաւ եռանդուն և փութոտ ջերմեռանդութեամբ աղօթել։ Այս եռանդը շատ օրեր շարունակելով խնդրուածքին հասաւ, և ականջը լսել սկսաւ, ու լեզուն խօսիլ։ Այս ընդունած շնորհին փոխարէն՝ երախտագէտ հոգւով մինչև ցմահ այն եկեղեցւոյն ծառայութեանը ինքզինքն նուիրեց, ալոցի նուաստ պաշտօնը վրան առնելով։

Դարձեալ կոյր մը եկեղեցին բերուելով՝ վերի ըսած ջրով սրսկուածին պէս՝ մէկէն առողջութիւնը կը գտնէ։ Նոյնը շնորհուեցաւ ևս կոյր աղջկան մը, որ ան ջուրը գործածելով մէկէն աչքները բացուեցան։ Նմանապէս Լուգդացի կին մը տեռատեսութենէն տանջուելով մահուան դուռը հասած էր, բայց լսելով որ Իրեն պէս կին մը այս ախտէն սրբոյն միջնորդութեամբը ազատուած էր, յոյս մը կը վառուի սրտին մէջ առողջութիւնը գտնելու։ Ուստի ազգականներէն ոմանք Դաւթին գերեզմանը կ'երթան, և սրբոյն մարմնոյն վրայ պատած լաթը առած կը բերեն հիւանդ կնկանը՝ որն որ դպցնելն պէս՝ բոլորովին կ'առողջանայ։ Սոսանկ ալ Էմիլիա անուամբ Լուգդացի դիւահարեալ կին մը սրբոյն գերեզմանին առջևը դրուածին պէս՝ սկսաւ գարշելի նիթեր փսխել, ու յետոյ տանջող չար հոգիէն ազատուեցաւ, որով բիւր շնորհակալութիւններ կը մատուցանէր Աստուծոյ սրբոյն բարեխօսութեամբն ընդունած պարգևին համար։ Դարձեալ անդամալոյծ մը թէ և երկար ատեն որոշեալ ժամերուն սրբոյն տապանին առջևը կը տանէին, և խնդրած առողջութիւնը չէր ստանար, 'ի վերայ այր ամենայնի յոյսը չկտրելով կը շարունակէր աղօթքը, ինչուան որ օր մը վրան առոյգութիւն մը դգալով ակնթարթի մը մէջ վեր կը ցատքէ, և կը սկսի քայլել հազար փառք Աստուծոյ տալով այս ցաւէն բժշկուելուն։ Այս անակնկալ հրաշքին լուրը հարիւրաւոր մարդկանց բերանը կը պտըտէր և կը տարածուէր։

Զեր։ աղեր ևս լութեամբ անցնիլ յետագայ երկու նշանաւոր դէպքերուն վրայ, որոնք դարձեալ հաստատուն ապացոյց են Դաւթին սրբութեանը։

Ազնուական Լուգդացի մը ջերմէն բռնուելով՝ շատ դեղեր դարմաններ գործածած էր այս հիւանդութիւնը կտրելու, և բոլորը պարապ ելած էր։ Վերջապէս բարեկամներէն մէկ քանին յորդորեցին զինքը որ երթայ Դաւթի տապանին առջևը աղօթէ, իրենք ալ Աստուծոյ ուխտեցին որ եթէ առողջանայ՝ ազնիւ մեծագին պաստառ մը կ'ընծայեն սրբոյն տապանը ծածկելու։ Հաւնեցաւ այս խորհրդին հիւանդը, և սուրբ Միքայէլի եկեղեցին բերուելով՝ հոն ամենայն քնէն բռնուեցաւ, յետոյ արթնցածին պէս՝ ջերմը վրայէն կ'անցնի կ'երթայ, ուժն ալ առաջուան պէս տեղը գալով ինքիրմէ տունը ուրախ և զուարթ կը դառնայ։

Իսկ երկրորդ հրաշքը պատմելէս առաջ, գիտնալու է որ ինչպէս ամենահին ձեռագիրներէն յայտնի է, սուրբ Միքայէլ հրեշտակապետին եկեղեցւոյն մէջ առջի ժամանակներէն 'ի վեր բաւական քահանայք որոշուած էին այն եկեղեցւոյն սպասաւորութեանը, որոնք կանոնիկոս կը կոչուէին, թէ և բարերարութիւն մը չէին վայելէր։ Բայց ասանկ ժողով մը կազմելնուն համար, այս անունը կը կրէին։ Արդ ասոնց մէջէն մէկ մը լսելով սրբոյն այնչափ նշանաւոր հրաշքները՝ եռանդը կը շարժի քովը մասունք մը ունենալու։ Ուստի գիշերանց եկեղեցին կը մտնէ, և յանդգնութեամբ տապանը

բանալով փորձ կը փորձէ մատ մը անկից փըրցընելու։ Մեծաբանչ զարմանք, այն ձեռքը որ երկնցած էր սրբոյն մատը գողնալու, յանկարծ անհերևոյթ զօրութեամբ մը կապուած կը մնայ սրբոյն մատէն ամուր շղթայի մը պէս, անանկ որ բոլոր գիշերը պարապ կ'ելլէր իր ջանքը ու աշխատանքը մատը այն կապէն թօթուելու։

Առտուն ժամը բացուելու ատենը ժողովուրդը և քահանաները տեսնելով եղածը, սկսան զարմանալ և սաստիկ յանդիմանել կանոնիկոսը։ Ոն որ ամօթով և վախով լեցուած ինչ ընելիքը չէր գիտէր, բայց եթէ խոնարհութեամբ յանցանքը խոստովանիլ։ Ուստի քահանաները և ժողովուրդը, որոնք բազմութեամբ ներս դիմած էին տեսնելով որ տառապեալը և ոչ կերպով մը իր մատը կրնար արձակել կապէն, խոնարհութեամբ աղօթքի ապաւինեցան, և սուրբը խնդրուածնին լսելով աղատեց կանոնիկոսը, որ զարհուրած կեցած էր, և աւելի համոզուելով հանդիպած հրաշքէն՝ աւելցուց Ջերմեռանդութիւնը և յարգութիւնը Դաւթին հզօր բարեխօսութեանը։

ԳԼՈՒԽ Ե.

Սուրբ Նշխարաց փոխադրութիւնները։

Շատ անգամ այս սրբոյ հոգւոյն Անօթին մարմինը տեղէն փոխադրուեցաւ։ Առջի փոխադրութիւնը եղաւ ինչպէս որ վերը յիշեցինք,

դերեզմաննոցէն ներս սուրբ Միքայէլ հրեշտակապետին եկեղեցին, Անսելմոս եպիսկոպոսին ատենը, որ Քահանայապետութեան գահը նըստաւ Աղեքսանդր Բ անուամբ 1061 տարիէն ինչուան 1073ին։

Երկրորդը՝ աւելի հաւանական է որ Աղեքսանդր Գ Պապին ժամանակը կատարուեցաւ[3]։ Այս քահանայապետը շարժուելով այնչափ հրաշքներէն, որ Աստուածային գթութեան ձեռքովն կ'ըլլային Դաւթին սրբութիւնը հաստատելու համար, Հռովմէն հրամայեց որ աւելի պատշաճ կերպով պահուի սրբոյն պատուական մարմինը, և անոր համար թրծած կաւեղէն տապանը, ուր ամփոփուած էին նշխարքն, ուրիշ մարմարիոնեայ տապանի մէջ անցնեն և դնեն։ Քահանայապետական հրամանը շուտով 'ի գործ դրուեցաւ, բայց պատուական մարմինը նորէն սուրբ Ղուկասու խորանին քովը տեղաւորուեցաւ, և մարմարիոնեայ տապանին դրսի կողմը արձանագիր մը փորուեցաւ, որ կը ցուցնէր թէ հոն ամփոփեալ կային պատուական մասունք սրբոյն Դաւթի։ Այսկից յայտնի կ'երևնայ թէ այս քահանայապետը սրբոց կարգը դասած է մեր Դաւիթը իր յամին 1159. և ոչ Աղեքսանդր Բ. յամին 1061, ինչպէս մատենագիրներէն ոմանք կարծեցին[3]։

Իսկ երրորդ փոխադրութիւնը 28 յուլիսի 1547ին Սեղբեստրոս Ճիլի Բ, սուրբ Միքայէլի անուանի կանոնիկոսաց ժողովքին Աւագերէցը զլուխ հանեց յետագայ կերպով։ Որպէս զի խորանը և մատուռը, ուր յարգութեամբ կը

պահուէր մեր սրբոյն պատուական մարմինը, ա-
ւելի չքեղ և հոյակապ չինուին, հարկ եղաւ նո-
րէն տապանը տեղէն շարժելու։ Ուստի սրբոյն
մարմինը տեսնելու համար երկու տապաններն
ալ բացուեցան, և թէ և առջի փոխադրութենէն
ինչուան այս երրորդին իբր հինգ դար վրան ան-
ցած էր, 'ի վերայ այսր ամենայնի տեսնուեցաւ
որ մարմինը դեռ չէր փտտած, ամբողջ անա-
պական մնացած էր։ Երկայն հասակով ուժեղ
երիտասարդ մը կ'երևար իբր երեք կանգնի
չափ, գլուխը մեծ էր և ամբողջ, այլ գագաթին
կողմը երկրաթէ խորունկ հարուած մը կը տես-
նուէր, որ անշուշտ Բոլանդեանց կարծեաց
համաձայն հանդիպած էր առջի փոխադրու-
թեան ատենը, գերեզմանը փորելու ժամանակ-
նէն անզգուշութեամբ բանուոր մը բրիչը գլու-
խը զարկած պիտի ըլլայ։ Զուրկ էր ևս գլուխը
մազերէն, և երեսն ալ անմօրուս, քիթը և վե-
րին շրթունքը քիչ մը մաշած, որով անոր ակ-
ռաները մարգարտի պէս շարուած կը փայլը-
լէին։ Աչքերուն ամէն բարակ մաշկը անա-
ռատ էր, բայց ցամքած, ինչպէս խուչափոն ալ
և ուրիշ շրջակայ մասունքը, իսկ դէմքը գեղեցիկ՝
թէպէտ և ցամքած, անանկ որ մէկ մը կենդա-
նութեան ատենը զինքն տեսած ըլլար նէ, կըր-
նար ևս ան ատենը ճանչնալ։ Կողերը, ծուն-
կուլները և որուն՝քն ոտքին ձախ թաթին հետ
մէկտեղ մարթապատ և անարատ էին, բայց
ցամքած։ Նոյնպէս մարմնոյն ուրիշ մասերը ամ-
բողջ գտնուեցան և մարմնոյն հետ միացած, այլ
անմիս և անմարթ, աջ բազկէն 'ի զատ ձեռքի

թաթիւն հանդերձ որ երկրորդ փոխադրու-
թեան ատենը հանուած էր տապանէն, և ար-
ծրթէ ամանի մը մէջ դրուած էր 'ի համբոյր և 'ի
մխիթարութիւն հաւատացելոց։ Այսանկ ևս բո-
վանդակ մարմինը արծրթէ ամանին մէջ ամիս-
փուած բազկին հետ՝ անուշ հոտ մը կը բուրէր,
բոլորովին օտար այս աշխարքին անուշահոտ ի-
բաց հոտէն, ինչպէս վկայեց Փրանկիսկոս Փլո-
ռենտեան երևելի բժիշկը։ որն որ արժանի ե-
ղաւ մէկիկ մէկիկ աչքով քննելու անոր բովան-
դակ անդամները, զորս ընդարձակ ստորա-
գրեց։ Բաց ասկէ նկատուեցաւ որ նոյն տապա-
նին մէջ գտնուած երեք նրբանութի պատուա-
նները, որոնցմով փաթթուած էր մարմինը, դեռ
անարատ և ամբողջ էին, և անանկ պայծառ
գունով կը փայլէին, որ կարծես թէ նոր հոն
տարածուած էին մարմնոյն վրայ։ Նոյնպէս
գտնուեցան ևս չորս պզտիկ գաւազաններ, ո-
րոնք իրարու անցնելով՝ գաւազան մը կը ձևացը-
նէին, զոր սովորութիւն ունին ուխտաւորները
կրելու, և անոր ծայրը երկրաթէ ճանկ մը։ Դար-
ձեալ մարմնոյն քով կային ճիւղերէ փունջեր և
մաղէններ, զորոնք առջի փոխադրութեան ա-
տեն հաւատացեալք դրին 'ի նշան անոր յաղ-
թութեանը և մաքուր կուսութեանը, ինչպէս կը
ստուգէ մեզի Ամեդէոս Սամենեան։ Արդ յե-
տեալ սուրբ Ղուկասու խորանին նորոգութիւնը
լմընցնելով՝ նոյն տարին սեպ. 11ին հինգ ժամու
չափ պատուական մարմինը եկեղեցւոյ մէջ տե-
ղը դրին՝ որ ամէնքը տեսանեն և յարգութիւն-
նին ընծայեն, և նորէն 23 ժամուն երկու տա-

պաններուն մէջ ամփոփուելով յիշեալ նորակերտ խորանին քով տեղաւորեցին ամմէն զարդերովն և գանուած իրերովն մէկ տեղ։

Բայց 1592. սեպտ. 3ին Մարգիանոս ձիւլի սուրբ Միքայէլ հրեշտակապետի եկեղեցւոյն Աւագերէցը ուղեց որ այս խորանէն աւագ Սեղանը փոխադրուի սրբոյն մարմինը, անոր համար այս չորրորդ փոխադրութիւնը մեծ հանդիսով կատարուեցաւ։ Դարձեալ երկու տապանները եկեղեցւոյ մէջ բացուեցան, և վեց ժամու չափ սրբոյն մարմինը ամմէնուն առջևը դրուեցաւ յարգութեան համար, խուռներնթաց բազմութիւն մը տեսնուեցաւ որ ժամը կը վազէր տեսնելու այն կրօնական հանդէսը, և մեր սրբոյն բարեխօսութիւնը կանչելու։ Իսկ յիշեալ Առաջնորդը ճայնաւոր պատարագը մեծ հանդիսիւ կատարելէն ետքը, գոցեց սրբազան տապանը, և պատուով եկեղեցւոյն աւագ խորանին տակը տեղաւորեց։

Իսկ 1646ին յուլիս ամսոյն վերջերը գերապայծառ Իգնատիոս ձիւլի Աւագերէցը հրամայեց որ դարձեալ հանուի տապանը աւագ սեղանին տակէն, և յարմար ձևով մը նորէն հոն դրուի, որպէս զի հաւատացեալք աւելի դիւրութեամբ կարող ըլլան տեսնել պատուական մարմինը։ Այսոր համար որոշեց նախ որ ալ չի ծածկուի կտաւով մը ինչպէս յառաջ էր, այլ ուխտաւորի հագուստ հագուի։ Երկրորդ՝ անկից ետև կաւեղէն արկղի մէջ չի հանդչի, այլ տեղաւորուի նոճէ արկղի մը մէջ, մարմարիոնեայ տապանին ներսը անցուցած, որուն չորս կողմերը ոսկեթել

աղնիւ բանուած լաթ մը զարդարէ, և թափանցիկ ապակւոյ միջոցովթեամբ տապաններու առջևի կողմէն՝ երևնայ պատուական մարմինը ջերմեռանդներուն և ուխտաւորներուն բաղձանքը յագեցնելու համար։ Այսպէս այս հինգերորդ փոխադրութեան հանդէսը արտաքոյ կարգի փառաւորութեամբ և շքով եղաւ։ Եկեղեցւոյն կանոնիկոսաց գլխաւորը հանդիսէն առաջ, բոլոր Լուգդա քաղաքին իշխանութեան տեղերուն և սահմանակից իշխաններուն ծանուցումն և հրաւէր խրկած էր։ Ուստի ամէն մէկը կրնայ հասկնալ թէ որչափ մեծ եղած էր ժողովրդեան բազմութիւնը սուրբ Միքայէլի եկեղեցին այն երկու օրուան միջոցին մէջ սրբոյն նշխարաց փոխադրութեան տօնախմբութիւնը կատարուած ժամանակը։ Նոյն գլխաւորը Ճայնաւոր պատարագը ըրաւ, և երեկոյեան ժամերգութիւնը վճարելէն վերջը, թափօրով բոլոր քաղաքը պտըտցուց սուրբ մարմինը շքեղազարդ նոճեայ արկղին մէջ վերի ըսած կերպովը։ Թափօրը լմննալէն ետքը՝ նորէն աւագ սեղանին տակ նոր շինուած դիրքովն տեղաւորուեցաւ։ Գերապայծառ ձիւլի Իգնատիոսին նշանակած որոշողութեանը համաձայն։

Իսկ կաւեղէն տապանը՝ որ այնչափ դարեր Սրբոյն պատուական մարմինը ամփոփած էր, պատուով եկեղեցւոյն մեծ դրան աջ կողմը դրուեցաւ, դրսի կողմէն մարմարիոն քարերով զարդարուած, և բոլորտիքը երկաթի ոսկեզօծ վանդակ մը։ Տօնին օրը այս տապանը ջրով կը լեցուի, և ջերմեռանդութեամբ խմել ուզողնե-

բուն՝ ջուրը կը բաշխի, որմէ շատ հիւանդներ առողջութիւն կը գտնեն։ Նոյն տապանին վրայ ոսկեղէն տառերով գրութիւն մը կայ, որ կը ծանուցանէ թէ իբր 585 տարուան չափ այս կտեղէն տապանը սրբոյն մարմինը ամփոփած էր, ինչուան որ յամին 1647 Աւագերէցն Իգնատիոս հաւատացելոց ջերմեռանդութիւնը աւելցնելու համար դէպ 'ի աքանչելագործ սուրբն՝ այդ գործածութեան հոս տեղը դրաւ։

Հոս տեղ զանց ընելու չէ յիշել հռչակաւոր դէպք մը, այս է Լիվոռնոյ գտնուած հայազգի վաճառականք ամէն սիրով իրենց համազգի Սրբոյն յարգութիւններն ցուցնելու համար ներկայ գտնուած էին այն հանդիսին առատ պարգևներով և ուխտերով, և պատիւ ունեցած էին թափօրին ատենը ամպհովանին բռնելու սրբոյն վրայ, և շքեղազարդ դագաղը շալկելու նախապատիւ քահանայից հետ մէկտեղ։ Այս տասներկու բարեպաշտ վաճառականները այնչափ գոհ և ուրախ եղան այս բանին, որ իրենց այցելութեանը յիշատակին համար հայերէն գրով արձանագրութիւն մը թողուցին։ Այս գիրը Փլորենտեան Անտոնինոս Պորտի՝ ազգին հիւպատոսը հայերէնէ իտալերէն թարգմանեց, և թէ բուն արձանագրութիւնը և թէ այս թարգմանութիւնը դեռ պահուած է ինչուան հիմայ սուրբ Միքայէլի եկեղեցւոյն գիւանը, զոր մենք ալ աչքովնիս տեսանք և կարդացինք։

ԳԼՈՒԽ Զ.

Սրբոյն Դաւթի քանի մի մասունքներուն վրայ տեղեկութիւն։

Սրբոյ մասունքներուն՝ յարգը ու պաշտօնը, այս է կամ անոնց ոսկրներուն, հագուստներուն, հողուն, և կամ այլ վերաբերեալ իրերուն, որ պատճառ կ'ըլլան բարեպաշտ յիշատակ մը արթնցնելու հաւատացելոց մտքին մէջ ըստ կիրքն ու ծագումն ունեցաւ Առաքելոց վարդապետութենէն։ Վասն զի յայտնապէս գործքս առաքելոց գրքին մէջ կը կարդանք [1] թէ Պողոսին թաշկինակները հիւանդներուն առողջութեանը համար կը տանէին։ Նոյնպէս սուրբ Անտոն Աբբահօր վարքին մէջ կը պատմուի, թէ ջերմեռանդութեան համար քովը կը պահէր սուրբ Պողոս առաջին ճգնաւորին գործածած արմաւէ պարեգօտը, և տոնի օրերը կը հագնէր [2]։ Դարձեալ սուրբ Պետրոս առաքելապետին շղթաները միշտ մեծ յարգութիւն պատճառեցին հաւատացելոց, և 'ի Հռովմ սուրբ Պետրոս 'ի կապանս կոչուած եկեղեցին կը պահուին, ուր տարիէ տարի տոնին օրը նոյն շղթաները համբուրել կուտան հաւատացելոց, ինչպէս մենք ալ արժանացանք նոյները համբուրելու և մեալ արժանացանք նոյները համբուրելու և մեալ

1. Գլ. ԺԹ. համար 12։
1 Տես վարք սրբոց, հատոր Ա. երես 81։

ծարելու։ Սանկ ալ սուրբ Գրիգոր Լուսաւորչին շղթաները Նէապոլիս քաղաքը մեծ պատուով կ՚ պահուին, ուր ընորհուեցաւ էս մեզի պատուական գլխուն հետ մէկ տեղ դանոնք համբուրելու մեր յուխտ գնացած տարին։ Փոքրիկ կոչուած Սրբոյ Յակոբին Եպիսկոպոսական Աթոռոյն համար կը գրէ Եւսեբիոս[1] թէ հաւատացեալք ինչուան այս օրուան օրս այս Աստուածակոխ քաղաքին արժանաւոր առաջին Եպիսկոպոսին Աթոռը պատուով կը մեծարեն։

Անոր համար զարմանալու չէ՛, թէ որ սուրբ Դաւթին պատուական մարմնոյն հետ մէկ տեղ պահուած էս տեսնուին այլ սուրբ մասունքները, որոնց վրայ կը վայելէ որ տեղեկութիւն մը տանք։

Եւ նախ՝ գիտնալու է որ հնուց սրբոյն Դաւթի մարմնէն ձեռքովը մէկտեղ ալ բազկին կէսը հանուած էր, և արծըթէ ամանի մը մէջ դրուած, զոր սրբոյն տօնին օրը համբուրել կուտային ժողովրդեան ինչպէս որ առաջ ըսինք։ Բայց հինգերորդ փոխադրութեան ատենը, արծըթէ բարակ թելերուն միջնորդութեամբն դարձեալ այս կտորը ամբողջ մարմնոյն հետ միացաւ, և յիշեալ ամանին մէջ սոսկ ձախ ձեռքէն ոսկր մը դրուեցաւ, գեղեցիկ կոթի մը վրայ հաստատուած, որուն ծայրը կը կարդացուէր — մասունք Սրբոյն Դաւթի, կամ անոնց յոլովմանը համաձայն՝ Տավիթոյի։

Սակէ զատ հինգերորդ փոխադրութեան ատեն

1 Պատմ. եկեղ. գլխ. է. գլ. ԺԹ։

Լիսիոնոս քաղաքէն եկող հայազգի վաճառականները Գերապայծառ Իգնատիոս ՃԻԼԻ Սարգերէցէն իրենց բաղձանացն համեմատ՝ի պարգև ընդունած էին սրբոյն կողին ատրին հինգերորդ ոսկրը։ Բայց այս մասունքը առանց պատշաճ վկայականի մը՝ յանձնուած ըլլալուն՝ իրը քսանուերկու տարի չէին կրցած հրապարակաւ յարգել զայն, ինչուան որ 1668ին Յովհաննէս Պօղոս ՃԻԼԻ Սարգերդէն ընդունելով վկայականը, ալ անկից ետև սկսան ամենուն առջև յարգութեամբ դնել իրենց եկեղեցին, ուսկից մենք ալ արժանի եղանք մասունք մը ընդունելու, զոր սուրբ Վլասայ եկեղեցին՝ի Հռոմ արծթէ ամանի մը մէջ դրինք՝ի յարգութիւն հաւատացելոց։

Նոյնպէս ինչուան հիմայ դեռ կը պահուի շատ մեծարանքով սրբոյն Դաւթի գլխարկը, կամ գտակը, պզտիկ և տանելու դիւրին արկղի մը մէջ արծթէ բալլիքի տակ, որուն ներսի դին աղնիւ կերպասով ծածկուած է, և դրսի կողմը կարմիր թաւիշով։ Այս գլխարկը ինչպէս որ դիտցինք հայկական ձև մը ունի, թաղեայ (քէլէ) է, գոյնը կարմիր, անկար, մաղոտ, բարձր, այլ ծարուածքի չի դար՝ հաստ բրդէ շինուելուն։ Սրբոյն տօնին օրը, որ է յունիսի երեքին, սովորութիւն կայ այս գլխարկը անընդհատ ուխտաւորներուն և հաւատացելոց գլուխը դնելու, որոնք այն օրը շատ բազմութեամբ կը վազեն ժողովրդապետական սուրբ Միքայէլի եկեղեցին, մասնակից ըլլալու համար այն շնորհքներուն, զորս մեր սուրբը առատապէս կը բաշխէ

անոնց՝ որոնք հաւատքով իրեն կը դիմեն [1]։ Տարուան միջոցին ալ խնդրող հիւանդներուն կը տանին։ Այսու ամենայնիւ ինչուան հիմայ ամբողջ և անարատ մնացած է, դոյնն ալ չէ նեռտած, և քակուածք մը չ'երևնար վրան, ութը դար է որ առանց ուտող ցեցին տակաւին անարատ կը կենայ կոր։ Այս պատուական գտակին վրայ կը խօսի հայրն Փիլիպպոս Ֆերրարի սրբուհւոյն Մարեմայ ծառայից կարգէն, և կ'ըսէ թէ «սուրբ Միքայէլի եկեղեցին Հայկազն սուրբ Դաւթին գտակը կը պահուի, որ հիւանդներուն գլուխը դրուելով կամ հիւանդութիւնը կը թեթևցնէ, և կամ բոլորովին կը փարատէ»։ Նոյնպէս յիշեալ Ամիդէոսին համաձայն «ամենևին անգործ չի մնար մեր հայկազնոյն զօրութիւնը իր պատուական գլխարկովը»։ Եւ այս խօսքին հաստատութեանը համար կրնանք հոս տեղ դնանալն դէպքեր 'ի մէջ բերել, այլ 'ի սէր համառօտութեան բաւական կը համարինք հետագայ դիպուածը միայն պատմելու։

Յամին 1648 Յովհաննէս Մկրտիչ Պէրթինի անուամբ երիտասարդ մը շատ ամիսներէն 'ի վեր սաստիկ գլխացաւէ մը կը տանջուէր։ Լսելով որ Գերապայծառ Իգնատիոս Ճիլի անձամբ

1 Յառաջ դքսին և իշխաններուն ալ գլուխը կը դնէին, համբուրել տալով անոնց նաև արծաթապատ սուրբ Աջը իբրև թէ Սամենան Ամիդէոսի ըսածին համեմատ՝ սուրբը բռնադատեն, որ իր պատուական գտակովն իշխանին գլխին թագը պինտ ամրցնէ, և հզօր Աջովը պատսպարան ըլլայ անոր՝ անասան կենալու մնալու Հայաստանու այս բարձր լեռան վրայ։

հիւանդի մը կը տանէր սուրբ Դաւթին գտակը, որտանց բաղձանք ցուցուց՝ որ ինքն ևս վայելէ ասանկ օրհնութիւն մը։ Իր փափաքը շտապով լեցուեցաւ, և գլուխը այն սուրբ գտակը դրածին պէս մէկէն դադրեցաւ գլխուն ցաւը, և առողջացաւ։

Ահա այս է հոգէզարգ խաստովանութիւն վարուց պատմութիւնը, որ վստահ եմ թէ մեր ընթերցողաց որտերուն մէջ անար այնքան սքանչելի սրբութեանը վրայ մեծ զարմանք և միանգամայն ջերմագին փէր ազդած է։ Այսուհետև տար որ արդեամբ այս սուրբ եռանդը իրենց համբայ բանար Այսուհոյ ծառային առաքինի օրինակին հետևելու. վասն զի ասիկայ է սրբոց վարքը կարդալէն քաղելիք հշմարիտ պտուղը։ Որով չեմ տարակուսիր ևս թէ հաւատքով և սրբութեամբ մեր համազգի սրբոյն երկնաւոր դանձուց նշխարացն կը փափագին, որուն հզօր բարեխօսութեամբն ամէն խնդրուածքնին կը կատարուի և կը հասնին մասին ժառանգութեան սրբոյն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս։ Եւ դուք որ այս Քրիստոսի համար կամաւոր աղքատացելոյն վարքը կը կարդաք, արժանի սեպեցէք ձեր սուրբ աղօթքին մէջ զանարժանս յիշելու։

ՎԱԽԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԵՐ

1. Գլ. Ա. Դաւիթին Հայոց ազգէն ըլլալուն՝ անթիւանհամար հայ ուխտաւորաց 'ի հնուց Լուգգա քաղաքը անոր գերեզմանին ըրած այցելութիւններն յայտնապէս կը վկայէ։ Այսպէս Ֆրանչիսքոթիի հեղինակին պատմածին համեմատ Սաֆֆի հայազգի կոմսն գեսպան ղրկուելով 'ի Հռովմ յամի տեառն 1610 Պարսից Թագաւորին կողմէն Տաճկաց դէմ օգնութիւն խնդրելու համար, Լուգգա քաղաքէն անցած ատենը, հարցուց թէ ուր կը հանգչի իր հայրենակից սուրբը, որուն հրաշագործութեանց տեղեակ էր, և գիտէր թէ հոն թաղուած էր։ Իր ընկերաց և սպասաւորաց հետ մէկտեղ տարին կոմսը սրբոյն Միքայէլի եկեղեցին, ուր մեծ բարեպաշտութեամբ ուխտ կատարեց, հաստատելով ամենուն յիշեալ սրբոյն հայազգի ըլլալը։ Կը գտնուի ևս Լուգգա եկեղեցւոյն դիւանին մէջ Յովհաննէս եպիսկոպոսէ մը հայերէն գրութիւն մը գրուած յամի 1596 յուլ. 26 ին թէ «Դաւիթ ուխտաւոր 'ի սուրբ Յակովբ 'ի գնալն վախճանեցաւ 'ի քաղաքս Լուկայ և բազում սքանչելիս արար 'ի կենդանութեան և յետ մահուան, և էր 'ի Հայոց ազգէն։ Ես Յովհաննէս Եպիսկոպոս գրեցի զայս բան»։ Նոյնպէս 1646ին յուլիսի 30ին հռչակաւոր է Լիվոռնո գտնուած վաճառականաց գրութիւնը, զոր 'ի յիշատակ թողուցին փառաւոր հանդիսի փոխադրութեան նշխարաց սրբոյն, որով կը ծանուցանեն թէ սուրբն Դաւիթ հայ էր ազգաւ։ Հոս տեղեկութեան համար անուններն կը դնենք ըստ արձանագրութեանն.

Ես Սսեցի խոճա Սէֆէրս խոճա Սինանի որդի այս գիրս գրիլ եմ։

Ես Ղայսերցի խոճա Հալալլայի որդի Պայրամ չէլէպիս այս գրին գրիլ եմ։

Ես Ղայսերցի Ղաքըրճը օղլու խոճա Պուտակս գրիլ եմ այս վերին գրին։

Ես Էնկուրցի խոճա Վարհամշահի որդի Ակոբ չէլէպիս այս գրին գրիլ եմ։

Ես Ղայսերցի խոճա Թումայի որդի Սիմէոն չէլէպիս այս գրին գրիլ եմ։

Ես Թոխադցի խոճա Ալէքսանս խոճա Ղազարի որդի այս գրին գրիլ եմ։

Ես Ղայսերցի Ուզունեարմազի որդի խոճա Պողոս այս գրին գրիլ եմ։

Ես Ղայսերցի Հաբէլ օղլու խոճա Փանոս այս գրին գրիլ եմ։

Ես Իզմիրցի Պողոսի որդի խոճա Սէրգիսը այս գրին գրիլ եմ։

Ես Իզմիրցի Իւրղանճի խոճա Մուրատին որդին Յովհաննէս այս գրին գրիլ եմ։

Ես Ղայսերցի Էմիրպալուն որդի Պայրամ այս գրին գրիլ եմ։

Ես Մարտիրոս Սարգիսի որդի Իզմիրցի այս գրին գրիլ եմ։

Դարձեալ նոյն գիւանին մէջ կը պահուի հայերէն գրով այլ արձանագրութիւն մը հայ ուխտաւորաց ան կերպով.

խոճա Սարգիս Ասլանի որդի Վանցի.
խոճա Ասլան Պողոսի որդի Ղայսերցի.
խոճա Իսայի Մովսէս Նախջուանցի.
խոճա Մարկոս Վանցի։

Ասոնք Լիվոռնո քաղաքէն Թոխադցի խոճա Ալէքսանին հետ մէկ տեղ եկան սուրբ Դաւթին ուխտերնին կատարելու համար հոկտ. 12ին 1656ին։

Նոյնպէս Առաքել եպիսկոպոս մը Երևանցի 'ի յիշատակ իւր ուխտագնացութեանը կը գրէ. « Ես Առաքել Եպիսկոպոս Երևանցի եկի Լուկայ, ուխտ արի սուրբ Դաւթի 'ի Թիվն Հայոց ՌՃԺԸ »։ Բայց ասկէ ձեռքերնիս զոյաւոր փաստ մը ունինք՝ որով առանց տարակուսի կրնանք

հաստատել թէ սուրբ Դաւթի հայ էր ազգաւ։ Մեծիմաստան Բարոնիոս վկայաբանութեան ծանօթութեանց մէջ սուրբ Դաւթին վրայօք խօսելու առնը կ'ըսէ, թէ մենք Լուգդա եկեղեցւոյն ընդունած վարքը տեսանք, տեսանք ևս Լադերանեան մայր եկեղեցւոյն ամենահին մագաղաթեայ ձեռագիր մը այս վերնագրով « Պատմութիւն վարուց և մահուան և հրաշից խոստովանողին Քրիստոսի երանելւոյն Տավինոսի »։ Արդ ըստ Բոլլանդեանց յայտնի է որ այդ պատմութիւնը շատ հին է, անանկ ատեն մը գրուած է որ գեռ կենդանի կային ոմանք՝ որոնք կը վկայէին թէ իրենք աչքովնին տեսած և լսած էին սրբոյն գերեզմանին վրայ հանդիպած հրաշքները։ Եւ թէ և հեղինակին անունը չիկայ, այլ անտարակոյս է որ ժամանակակից գրութիւն է, և շատ հաւանական է որ 1142ին առաջ յօրինեալ է։ Այս վարքը Լուգդա քաղաքէն Հռոմ ղրկուեցաւ կանոնական կանոնիկոսներէն, իրենց կրօնակից եղբայրներուն՝ որոնց ան ատենները Լադերանեան մայր եկեղեցին տակաւին յանձնուած էր։ Արդ այս ամենահին մագաղաթեայ վարքը յայտնի կ'ըսէ թէ սուրբն Դաւթի հայազգի էր։ Նոյնպէս Լուգդա գտնուած հիմնական ձեռագիրը որ վեշտասաներորդ դարուն գրուած մըն է՝ օրինակեալ ինչպէս կ'երևնայ վերոյիշեալ հնագիր պատմութենէն, նոյնը կը հաստատէ ըսելով թէ Այրա աստուծոյ ծնաւ 'ի Հայաստան աղնուական ցեղէ մը և այլն։ Իսկ մշանջենաւոր աւանդութիւնը ըստ ինքեան աւելի կը զօրացնէ, և այլ շքեղ ապացոյց մը կ'աւելցնէ հայ ըլլալուն։ Վասն զի սրբոյն խօսած լեզուն և հագուստին ձևը բաւական այդ բանը կը ցուցնէ, նոյնպէս անոնք որ 'ի կենդանութեան զինքն հիւր ընդունած էին հիւանդացոյը, և զինքն թաղողներն անգամ պատմած ըլլան յաջորդներուն Հայ ըլլալը, և հնար է որ նոյն իսկ սուրբը ըսած ըլլար. որով աւանդութեամբ ինչուան հիմայ նոյն քաղաքին բնակիչներուն բերանը մնացած է թէ սուրբ Դաւթի հայազգի է, և իրենց ոճովն յիշել ուզենք նէ San Davino l'Armeno, այս է հայ սուրբն Տավինո։ Բայց հոս տեղ հնար է որ տարակոյս մը ելլէ հայ ըլլալուն, վասն զի նոյն իսկ անունը յաւէտ հայկական չէրևնար, իբր զի խառնուրդն David Դաւթի անուան նուազականը ըլլայ այս է Դաւթիկ, ինչպէս Tobia, որուն նուազականը Tobini. (թէ և

հնար է հանել եւ այս անունը Դաւիթ՝ 'ի Դուինոյ քաղաքէն, որ հոնկից ըլլալուն նշանակ է). հնար է կ'ըսեմ եւ որ Տաւիթնօ անունը եկամուտ ըլլայ, ինչպէս շատերը սովորութիւն ունին կոչուելու ուրիշ օտար անուամբ, փոխելով բուն անուններին խոնարհութեան համար անծանօթ մնալու դիտմամբ: Ի վերայ այսր ամենայնի այդ կերպ անուանակոչութիւնը կեղտ մը չի բերեր հայազգի ըլլալուն, ըստ որում ամէն իսալացի մատենագիրը միալան կը հաստատեն թէ Դաւիթ հայ էր ազգաւ, թէ և գաւառը և ծնունդեան քաղաքը բոլորովին անծանօթ են: Սանակ Բայցի Աբբայն կամալսուլեցի 'ի գիրս իւր յաղագս սրբոց և երանելեաց Թօսքանայի: Նոյնը կը հաստատեն եւ Հայրն Կեսար Ֆրանչիսթիի և մեծիմաստ Բոլանդեանք հաւաքիչք վարուց սրբոց 'ի յունիսի 3:

2. Գլ. Գ. Այս տեղը ուխտաւորեղ է, և այն տեղները կը կարդանք 'ի վարս Սիմոնի Ճգնաւորի, որն որ Հայ էր ազգաւ, ծնեալ յամի տեառն 986, և մեռեալ 1016, յուլ 26ին, թէ գնացած է յուխտ 'ի Սպանիա 'ի Քոմփոսթէլլա, և շատ ուխտի տեղուանք պտըտելէն վերջը Մանդուա կը մեռնի, և հոն շատ հրաշքներ ընելուն համար՝ Բենեդիկտոս սրբազան Պապն կոնդակով ոտն կարգեց սրբոյն:

Մենք հոն մեր ուխտը կատարելու ժամանակնիս՝ արժանի եղանք միջնորդութեամբ տեղւոյ Եպիսկոպոսին որ կը կոչուէր Արհիեպատիս Գերապայծառ Պետրոս Բօթա, խոշոր մասունք մը ունենալը սրբոյն գլխէն, կոտր մը անկէ 'ի Հռովմ սուրբ Վլասայ եկեղեցին զետեղելիք արծաթի ամանով 'ի ջերմեռանդութիւն հաւատացելոց, և այլ մաս մը փառաւոր արծաթի տուփի մը մէջ ամփոփեալ՝ յիշատակ ղրկեցինք մեր Դամասկոսի եկեղեցւոյն: Արդ դառնանք մեր առջի խօսքին, այս է սուրբ Յակոբայ Առաքելոյն ուխտ երթալը շարունակած կը տեսանք մեր մէջը ինչուան անցեալ դարը, ինչպէս կը վկայեն յիշատակարանք պահեալք 'ի դիւանի սրբոյն Վլասայ 'ի Հռովմ: Ահա այն արձանագրոց քանի մը հատը.

« Յամի տեառն 1605, Աստուածատուր Սահակ Սեբաստացի հայազգի յ'8 ապրիլի, գնաց յուխտ 'ի սուրբ Յակոբ:

« Յամին 1608, խոճա Գրիգոր Կիրակոսեան Երզնկացի դարձ արար 'ի սուրբ Յակոբայ որ 'ի Քոմփոսթէլլա:

« Յամին 1609', Գասպար Մարտիրոսեան Հալէպցի գնաց 'ի սուրբն Յակոբ՝ 'ի մարտ 6:

« Յամին 1606, Յովհաննէս աղպահ Սեբոյ գնաց 'ի սուրբն Յակոբ: Նոյնպէս Լուկիոս Յովհաննեսեան Թոխաթցի ընդ կնոջ իւրում աստի մեկնեցաւ 'ի սուրբն Յակոբ: Դիւանագիրք հայ հիւրանոցի սրբոյն Վլասայ 'ի Հռովմ:

3. Գլ. Ե. Ոմանք կը դնեն թէ Աղեքսանդր Բ քահանայապետն որն որ յառաջ եպիսկոպոս էր 'ի Լուգդա Անգլիոս անուամբ յամին 1056, և քահանայապետ եղաւ յամին 1061, և մեռաւ 1073ին, 'ի կարգս սրբոց դասած ըլլայ սուրբ Դաւիթը իբր յամին 1061: Բայց աւելի հաւանական է որ Աղեքսանդր Գ քահանայապետը դասած ըլլայ 'ի կարգս սրբոց մեր սուրբը յամին 1159, և անանկ հանդիսաւոր եղած է այս կարգելն 'ի Թիւս սրբոց, որ Լուգդա թեմին բովանդակ եկեղեցիները սկսան ան ատենէն ամէն տարի մեծահանդէս ոտնը կատարելու: Բոլոր ուրում գերեզմանոցէն յեկեղեցին փոխադրիլը եպիսկոպոսական իշխանութեամբ հնար էր կատարել, այլ խորանին տակը երկրորդ անգամ եղած փոխադրութիւնը՝ սովորութիւն չէր այն դարը 'ի գործ դնելու. եթէ ոչ սրբազան Քահանայապետին սրբոց կարգը դասելուն հրամանը առնելէն վերջը: Սանակ ալ այս ատենները հաւատացելոց բարեպաշտութիւնը արծարծելու համար տապանէն դուրս առանձին արծաթի տուփի մը մէջ բազուկը կը դնուի: Այս երկու հաչակաւոր դէպքերս մինթէ շատ չեն ցուցնէր՝ որ Դաւիթի հանդիսապէս սրբոց կարգը անցած ըլլայ, թէպէտ և յայտնի պաշտօնական գրութիւն մը չունինք 'ի գործս յիշեալ քահանայապետին սուրբ Դաւիթն վրայօք: Այլ այս քահանայապետը քանի որ Անգլիոյ Եդուարդ, և Տանիոյ Կանուտոս թագաւորները, Բեռնարդոս Պայծառաձորոյ ըսուած Աբբայն, և Թովմաս Աբբեպիսկոպոսն Կանդարբերիոյ հետ զհնաւ 'ի Թիւս սրբոց կարգած էր, աւելի հաւանական է թէ նոյնը բրած է եւ նկատմամբ երանելոյն Դաւթի, ՁԵՆՕՎ և Վիթերպօ գտնուած ժամանակը, ինչպէս որ յայտնի է, ուսկից կրցաւ Լուգդա անցնիլ, և հոն կատարել հանդէսը:

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ—Арм ССР
Ա. Մ. Մաշտոցի անվան

ՅԱՆԿ

Ա. Քրիստոսասէր ընթերցողն 5
Գլ. Ա. Դաւթին ողջական հասակին արիական առաքինութիւնը ու ստացուածքէն հրաժարիլը 9
„ Բ. Երուսաղէմ և Հռովմ ուխտ երթալը . 13
„ Գ. Դաւթին Լուգդա քաղաքը երթալը և մահը 18
„ Դ. Դաւթին զանազան հրաշքները . . . 23
„ Ե. Սուրբ Նչխարաց փոխադրութիւնները . 30
„ Զ. Սրբոյն Դաւթի քանի մը մասունքներուն վրայ տեղեկութիւն 37

ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
12	26	պարզ	մեռոսի
42	7	իրեանք զերենք	իրենց
97	11	և թէ դուն	զոր դուն
140	8	խանարհութեան	խոնարհութեան

2241
2242

2183